կապեալներին, որոնց մեծ բազմութեամբ բերին Բաղարման։

Հարաշին այստեղ ստացաւ Հիշամի թուղթը, որով նա հրամայում էր նորան իւր մօտ գալ, նշանակելով իւր եղբայր Մասլամայ ի. Աբդուլմալիքին Հայաստանի եւ Ատրպատականի վերայ։ Գալով (իւր պաշտօնատեղը) Մասլամայ արշաւեց սաստիկ ձմեռային ժամանակ թուրքերի դէմ եւ անցաւ Բարբից, նոցա հետամուտ լինելով։

114 Թ. Հիշամ ի. Աբդուլմալիք դրեց Մրբվան ի. Մուհամեդ ի. Մրբվանին, իւր հօրեղբօրորդուն, Միջագետքի Ատրպատականի եւ Հայաստանի վերայ կառավարիչ[1]։ Վերջինս գտանւում էր Մասլամայի զօրքի հետ Հայաստանում։ Մրբվան մնաւ խաղաղաց երկիրը, ապատակեց եւ աւերեց, աւարի առաւ եւ դերեց, հասնելով մինչեւ երկրի սահմանները, ուր նա մնաց առ ժամանակ մի, մինչեւ թշնամուն նուաճեց եւ պատժեց նորան։ Ապա մնաւ Սարիր թագաւորի երկիրը, որի բնակիչների հետ նա պատերազմեցաւ եւ առաւ նորա բերդերը. թագաւորը նորան հպատակեցաւ եւ խաղաղութիւն կապեց՝ նորան 1000 ստրուկ, 500 այր եւ 500 կին սեւ մազերով (տալու), եւս 100.000 մոդա[2] Բար (քաղաքը) մատակարարելու պայմանով։ Մրբվան հաշտութիւն հաստատեց Ցումանի բնակչաց հետ՝ 100 գլուխ կիսակէս[3], եւս 20.000 մոդա տալու պայմանով։ Նմանապէս Զերիկիբանի իշխանը, որի երկիրը նա մնաւ, հաշտութիւն կապեց նորա հետ։ Գալով Համդին, որի բնակիչք նորան դիմադրեցին, նա պաշարեց եւ առաւ նոցա ամրոցները։

---

1 Ցաբարին (տե՛ս վերեւ) յիշատակում է այս դէպքը 115 թ.։

2 Ուելացնելու է՝ գարի եւ ցորեն։

3 Իմա՛ 50 այր եւ 50 կին։